

Հավելված N1
 Հայաստանի Հանրապետության
 պետական եկամուտների կոմիտեի նախագահի
 2020 թվականի ապրիլի 17-ի
 N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 15-06-2021 թ. որոշմամբ
 ««ԴԻՍ ՓՐՈՓԵՐԹԻՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ»
 Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
 հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ԴԻՍ ՓՐՈՓԵՐԹԻՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ	
1.2 Գտնվելու վայրը	ՏԱՎՈՒՇ ԴԻԼԻՋԱՆ	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.783862	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2013-09-26	
1.5 ՀՎՀՀ-ն	07616584	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)55238917	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը	a.karapetyan@philin.am	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արթուր Դավթյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	14	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Դիլիջանի Միջազգային դպրոցի կառուցման ծրագիր	109032650
	Վարձակալությունից և հուշանվերների վաճառքից մուտք	92660520
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Դիլիջանի Միջազգային դպրոցի կառուցման ծրագիր	69569590
	Վարձակալությունից և հուշանվերների վաճառքից մուտք	395650

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվություններ/ նվիրաբերություններ		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Դիլիջանի Միջազգային դպրոցի կառուցման ծրագիր	237869093	
Դիլիջան քաղաքի մարզադաշտի վերանորոգման աշխատանքներ	7000000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	261419411	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	244869093	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 7 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«ԴԻՍ Փրոփերթիս» Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԴԻՍ Փրոփերթիս» Բարեգործական Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 21.2-ի վրա, որտեղ նկարագրվում է ՀՀ Հարկային օրենսգրքի տրանսֆերային գնազոյացման վերաբերյալ կարգավորումների ազդեցությունը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա: Ղեկավարության գնահատմամբ այդ ազդեցությունն էական չէ: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն



Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու




9 հունիսի 2021թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	616,217	682,499
Ներդրումային գույք	5	36,337,320	37,268,270
Ոչ նյութական ակտիվներ	6	42,287	46,422
Տրված ոչ ընթացիկ փոխառություններ		19,345	10,500
		<u>37,015,169</u>	<u>38,007,691</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	480,603	525,129
Դեբիտորական պարտքեր	8	9,026	9,449
Կանխավճարներ	9	2,779	18,176
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10	2,982	1,444
		<u>495,390</u>	<u>554,198</u>
Ընդամենը ակտիվներ		<u>37,510,559</u>	<u>38,561,889</u>
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
<i>Զուտ ակտիվներ</i>			
Կուտակված շահույթ		214,719	176,647
		<u>214,719</u>	<u>176,647</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	36,780,649	37,819,980
		<u>36,780,649</u>	<u>37,819,980</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Եկամտին վերաբերող շնորհներ	12	491,100	539,378
Կրեդիտորական պարտքեր	13	24,091	25,884
		<u>515,191</u>	<u>565,262</u>
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		<u>37,510,559</u>	<u>38,561,889</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 9-ին:

Արթուր Դավթյան
Տնօրեն



Արմինե Սահակյան



Հաշվապահական ընկերության ներկայացուցիչ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նվիրատվությունից եկամուտ	14	1,265,650	1,444,002
Ներդրումային գույքի վարձակալությունից եկամուտ		84,625	86,015
Այլ եկամուտ		4,726	14,353
Մաշվածության և անորոշացիայի ծախսեր		(1,020,805)	(1,031,142)
Պահպանման ծախսեր		(205,820)	(270,021)
Անձնակազմի ծախսեր		(38,106)	(61,565)
Համայնքի զարգացման ծախսեր		(33,425)	(127,772)
Մասնագիտական ծառայություններ		(9,925)	-
Այլ ծախսեր	15	(8,956)	(9,386)
Գործառնական գործունեությունից արդյունք		37,964	44,484
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		108	(285)
Տարվա շահույթ		38,072	44,199

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	132,448	132,448
Տարվա շահույթ	44,199	44,199
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	176,647	176,647
Տարվա շահույթ	38,072	38,527
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	214,719	215,174

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	38,072	44,199
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	1,020,805	1,031,142
Շնորհներից եկամուտ	(1,265,650)	(1,444,002)
Հիմնական միջոցների օտարումից վնաս	-	21,214
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(108)	285
<i>Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>(206,881)</u>	<u>(347,162)</u>
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	423	(977)
Պաշարների փոփոխություն	44,526	3,584
Կանխավճարների փոփոխություն	15,375	3,226
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(1,793)	8,966
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ</i>	<u>(148,350)</u>	<u>(332,363)</u>
Շնորհներից ստացված դրամական միջոցներ	178,041	330,186
<i>Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զույր դրամական միջոցներ</i>	<u>29,691</u>	<u>(2,177)</u>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(18,529)	(15,723)
Ներդրումային գույքի ձեռքբերում	(1,865)	-
Ներդրումային գույքի և հիմնական միջոցների օտարումից մուտքեր	956	-
Տրված փոխառություններ	(8,845)	(10,500)
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զույր դրամական միջոցներ</i>	<u>(28,283)</u>	<u>(26,223)</u>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	1,408	(28,400)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	130	(321)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	1,444	30,165
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	<u>2,982</u>	<u>1,444</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: